

Հոգեշնորհ՝ Տ. Գեղարդ Վրդ. Զիւսպէկեան

Հոգեշնորհ Հայր Սուրբը ծնած է Լիբանան, 1975-ին: Աւարտած է Այնճարի Ազգային Գալուստ Կիւլպէնկեան Երկրորդական Վարժարանը ապա Կաթողիկոսարանի Դպրեվանքին ընծայարանի բաժինը եւ ձեռնադրուած է Աբեղայ՝ 20 Մայիս, 2001-ին, իսկ Վարդապետական ձեռնադրութիւն ստացած՝ 15 Մարտ, 2009-ին:

Յետեւած է «Լիբանանի մէջ Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական Դպրոց»ի դասընթացքներուն, ինչպէս նաեւ՝ Չուիցերիոյ մէջ «Պոսաէի Միջ-Եկեղեցական Համալսարան»ի լսարաններուն:

Ծառայած է որպէս Լիբանանի «Թռչնոց Բոյն» որբանոցի ընդհանուր հսկիչ, Մ.Տ.Կ. Կաթողիկոսութեան Միջ-Եկեղեցական գրասենեակի վարիչի օգնական, Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի փոխ տեսուչի օգնական, Երիտասարդական Բաժանմունքի Վարիչ եւ Դպրեվանքի ուսուցիչ, եւ ապա որպէս Թեսաղոնիկահայ գաղութի Հոգեւոր Հովիւ, Հիւսիսային Յունաստան:

Հայր Գեղարդ պիտի հաստատուի Ս. Գաթրինգ եւ պիտի հովուէ Ս. Պօղոս Եկեղեցւոյ եւ Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդին եւ Ազգային Վարչութեան համամտութեամբը՝ Նայակրա Ֆոլզի Ս. Յակոբ Եկեղեցիի համայնքները:

Հայր սուրբը նշանակուած է նաեւ Առաջնորդարանիս Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդի Վարիչ, օժանդակելու համար Երիտասարդական հարցերուն, Կիրակնօրեայ Վարժարաններուն եւ Դպրաց Դասերուն, կազմակերպելով անոնց գործունեութիւնը եւ տարեկան սեմինարները:

Հայր Գեղարդ շաբաթական դրութեամբ պիտի օժանդակէ նաեւ Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Ս. Գրային սերտողութիւններուն, Կիլիկիա ռատիոժամին եւ Շողակաթ ամսաթերթին հրատարակութեանը:

Հայր սուրբը Գանատա ժամանեց Ապրիլ 8, 2009-ին: